ուած խորանի տանիքը և պատերը ամբողջովին նորոգուեցան. հիւսիս—արևելեան կողմի վայրը ընկած երկու դեղեցիկ խաչքարերը վերահաստատուեցան։

Բացի այս շինութիւններից Վեհ. Հայրապետը գիւղացիների համար շինել տուաւ նաև դաշտից դէպի գիւղ տանող, ինչպէս և գիւղի միջի ճանապարհները՝ որոնք բոլորովին խանգարուած և դժուարանցանելի էին. այժմ էլ Մովսէս անուն Աղէքսանդրապոլցի վարպետին յանձնուած է շինել դէպի անդնդալսոր ձորը հանող խանգարուած ճանապարհը՝ մինչև Արայի լեռան ստորոտը, որտեղ գիւղացիք ցանք և կալեր ունին։ Այս ճանապարհով կարելի կլինի ապա ձորի մէջ եղող ազբիւրի ամենապատուական ջուրը հեշտութեամբ վեր հանել վանքի համար։

Վեհ. Հայրապետը միաք ունի նաև առաջիկայ գարնան նորոգել տալ տաճարի սալայատակը և մեծ սեղանը, որ շատ բարձր է, և աստիճաններն անչափ. նմանապէս միաբանութեան կամ վանահօր համար սենեակներ պատրաստել տալ՝ որի համար 550 ռուբլի վճարով արդէն գնուած են մի շարք թուրքերի աներ։

Բոլոր այս նորոգութեանց վրայ մինչև այժմ ընդ ամէնը ծախսուած է 4210 ռ. 13 կոպ. որից 928 ռ. 63 կ. Վեհ. Հայրապետի նուէրն է, իսկ մնացեալը Գրիգոր եպ.-ի թոդածը։

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Ս. Պատրիարք Հայրը թողած լինելով առժամանակ պաշտօնավարութիւնը՝ Տ. Գրիգորիս եպս. Յովհաննէսեանին յանձնեց վարել Կրօնական ժողովին աշխատութիւնները. նպաստից յանձնաժողովն ալ նոյն նպատակով յանձնուեցաւ Տ. Վահրամ Մանկունի եպիսկոպոսին։

— Պիթլիսի Խնդրակատար վանքի որբանոցին վարչութեան Ս. Պատրիարք Հօր զրկած հաշուեցոյցն կը տեսնուի թէ որբանոցին մէջ կը խնամուին 41 որբեր, որոնք իրենց հարկաւոր եղած ուսումները սովորելէ զատ, կը սորվին նաև կոշկակարութիւն. Սոյն որբերուն ուսման, ուտելիքի, հագուստի ելն համար անցեալ տարուան հոկտ.-էն մինչև ներկայ սեպտ.-ի սկիզբը ծախսուած է 19,518 զրշ., որ ամբողջովին գոցուած է մեծ մասամբ Ազգ. Պատրիարքարանի նպաստով, մասամբ ալ զանազան բարերարներու նուէրներով. Վարչութիւնը մօտերս պիտի ձեռնարկէ նաև որբանոցին յատուկ բաղնիքի մը շինութեան, քաղաքին բարեսէր հայ տիկիններուն մէջ բացուած հանգանակութեան արդիւնքով։

— Նպաստից յանձնաժողովին որոշման համաձայն, Հաճնոյ մէջ որբանոց մը բացուած է, ուր կը խնամուին ու կը դաստիարակուին առ այժմ 25 որբեր։

— Երուսաղէմի ս. Յակոբեանց վանքին սեպհականութիւն եղող Սիօնի ս. Փրկչի վանքին շրջապատի նոր որմերը՝ որոնք բարձրացուած են սրբատաշ քարերով, և անոր փառաւոր դուռը՝ որուն ճակատը գրոշմուած է Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին անունն ու շինութեան թուականը, ամբողջովին աւարտեր են. Ս. Սրբազնութեան անձնական ծախքով որ 400 ոսկիէ աւելի գումար մը յատկացուցած էր այդ նպատակին։

— Կիպրոսի ազգայնոց հոգևոր հովութիւնը Երուսաղէմի Ս. Աթոռին իրաւասութեան տակ գտնուելով, որոշմամբ Միաբանութեան Տնօրէն Ժողովին և հաւանութեամբ Ս. Պատրիարք Հօր, յիշեալ կղզիին հոգևոր հովիւ կարգուեցաւ Տ. Պետրոս արեղայ Սարաճեան։ Նորընտիր հովիւը հոկտեմբերի սկիզբը կը մեկնի իր պաշտօնատեղին։

— Հայրապետական այն կոնդակը, որ կրօնական ժողովի 21 սեպտ. նստի մէջ կարդացուեցաւ, Տ. Գրիգորիս Ալէքսիանեան Սրբազանի կեանքն ու եկեղեցիին մատուցած ծառայութիւնները ներբողելէ և անոր մահուանը առթիւ ցաւ յայտնելէ ետքը՝ միևնոյն ժամանակ կը ծանուցանէր Սինոդի նախագահ Տ. Սարգիս արքեպիսկոպոսի մահը։ Հայրապետական Կոնդակին ընթերցումէն անմիջապէս ետքը, Կրօն. Ժողովի ատենապետ Տ. Գրիգորիս արքեպս. Յովհաննէսեան իր անդամակիցներուն հետ ոտքի ելնելով՝ հանգիստ մաղթեց Սարգիս Սրբազանին հոգւոյն։

— Յանուն Ազգ. վարչութեան Ամեն. Ս. Պատրիարքին կողմէ գոհունակութեան ու քաջալերութեան պաշտօնագիր մը զրկուեցաւ Բաղէշի Առաջնորդական տեղապահ Տ. Եղիշէ Վ. Զիլինկիրեանի, իր գոհացուցիչ պաշտօնավարութեան և վիճակային գործերուն մէջ իր խոհական ընթացքին համար։

— Ազգ. Պատրիարքարանի կողմէ դիմում եղած է Ֆրանսայի Կրթական Նախարարութեան՝ քանի մը ուշիմ տղաք ընդունել տալու համար Ֆրանսայի բարձրագոյն վարժարանները, մանկավարժ, ուսուցիչ և մասնագէտ ըլլալու համար, ինչպէս արդէն Հայ—Հռոմէական Պատրիարքարանին կողմէ այնպիսի դիմում եղած է քանի մը տարի առաջ և տասնէ աւելի տղաք ընդունուած են Ձրիապէս։

—Մարաշի մէջ Միս Սամբնոի տնօրէնութեան տակ բացուած են երկաս որբանոցներ ուր կան 170 տղայ և 114 աղջիկ. ասոնք որդեգրուած են յԱնգլիա մէյմէկ

մարդասէր անձի կողմէ. բարերարները խոստացած են նաև ի չափ հասակի ամուսնական ամէն ծախքերն ընել։ Դժբախտաբար այս որբերուն ևս թոյլտուութիւն չկայ գոնէ կիրակի օրերը իրենց եկեղեցին երթալու։

Մեծ Բուլղար գերմանացիին անօրէնութեան տակ երկսեռ երեք որբանոց կան, զատ մասնաւորներու յանձնուած, 85 տղայ, 108 աղջիկ. որոնք որդեգրուած են գերման բարերարներէ.

Նոյն տեղը Ցարութիւն աղա Պէնլիեանի հսկողութեան տակ 8 աղջիկէ բաղկացած որբանոց մը կայ, զոր բաց պահելու համար Ամերիկա դիմումներ կ'ըլլան. Այս աղջիկներ ևս պարտաւորուած են թողուլ իրենց մայրենի եկեղեցին և յարիլ բողոքականութեան.

Դարձեալ Մարաշի մէջ Պր. Սպիքր գերմանացին կը հաւաքէ 30 որբեր որ յղէ Ամասիա՝ իրենց յառաջացեալ ագարակը՝ երկրագործութիւն սովրեցնելու մտօք.

— Կրօն. Ժողովը Դերջանի փոխ.-առաջնորդ նշանակեց Երուսաղէմի միաբաններէն Վրթանէս վրդ.:

— Կրօն. Ժողովին մէջ վերջերս հայկական եկեղեցական երգեցողութեան կանոնաւորութեան և միօրինակութեան համար խնդիրներ ծագեցան. Արդէն ընտրուած է յանձնաժողով մը՝ որ սոյն խնդիրը մանրամասն կերպով պիտի ուսումնասիրէ. Յանձնաժողովին պատուակալ անդամ ընտրուած է ծանօթ երաժիշտ և նշանաւոր ձայնագրագէտ Պապա Համբարձում, որ բաւական ժամանակէ ի վեր Արմաշի վանքը կը գտնուի. Պապա Համբարձում կըսէ սակայն թէ «չի յուսար որ յանձնաժողովն իրական արդիւնքի մը յանգի, որովհետև անհաստատ կարողութիւններէ կազմուած է և ամէն ոք տարբեր տարբեր աղբիւրներէ ջուր խմած ըլլալով իր ուզածը առաջ պիտի քշէ»: Կը յիշուի թէ Պապա Համբարձումի գլխաւոր աշակերտ և այժմ Արմաշու Դպրեվանքին ձայնագրութեան ուսուցիչ Ցակոբոս էֆ. Չէրչեան ամբողջ շարականը կանոնաւորապէս դասաւորելով ծայրէ ի ծայր ձայնագրած է և հիմայ բարերար անձի մը քով կը գտնուի որ ստանձնած է անոր տպագրութիւնը.

— Կեսարիոյ առաջնորդ Գեր. Տրդատ եպս. Պալեան սեպտ. 5-ի կիրակի օրը ժամանեց Կեսարիա. Ընդունելութիւնը կատարուեր է մեծ հանդիսաւորութեամբ. Հայ և օտար կառավարական— պաշտօնական անձերու խումբ մը և 500-է աւելի հետիոտն և ձիաւոր բազմութիւն մը Կեսարիայէն 2 ժամ հեռու դիմաւորութեան գացեր են. Սրբազանը 3 հեծեալ ոստիկանաց և խումբ մը զինուորներու առաջնորդութեամբ մտեր է ս. Աստուածածին եկեղեցին. Նոյն միջոցին բոլոր եկեղեցեաց զանգակները կը հնչէին դաշն ձայնով. փողոցները բազմութեան պատճառաւ գրեթէ անանցանելի էին. Տ. Տրդատ եպսկ. եկեղեցւոյ դրան առջև կառքէն իջնելով շուրջառ և եպիսկոպոսական գաւազան առեր և քահանաներն ալ զգեստաւորեալ իրենց ձեռքերուն վրայ բարձր բռներ են Սրբալոյս Միւռոնը, զոր առաջնորդ Սրբազանը ս. Էջմիածնէն բերած էր. Սրբազանը իր անդրանիկ օրհնութիւնը և Ս. Հայրապետին ողջոյնները հաղորդելէ վերջ ժողովրդեան, եղեր է Առաջնորդարանի սրահը 300-ի չափ Հայ երևելիներու ներկայութեան. Շնորհաւորութեան եկած էին նաև հայ—հռովմէականաց առաջնորդական փոխանորդ վարդապետը և մէկ քանի երևելիներ, Ցունաց փոխ—առաջնորդը և կառավարչի օգնականը.

Սրբազանին ճանապարհորդութեան միջոցին եղած ընդունելութեանց մէջ մասնաւորապէս կը յիշուի Ինճէ—Սու յունարնակ գիւղի հասարակութեան ըրած փառաւոր ընդունելութիւնը: Տրդատ եպս. իր հետևորդներով հիւրընկալուեր է տեղւոյն մետրապոլիտին յատուկ յարկին մէջ և տեղացի յոյն քահանաներն ու երևելիները գալով Աջը համբուրեր և օրհնութիւնն առեր են: Կիրակի առաւօտուն Սրբազանը առաջնորդուեր է Ցունաց եկեղեցին և հոն եպիսկոպոսական աթոռին վրայ բազմելով յոյն կղերին խնդրանքով «Հաւատամք» և «Պահպանիչ» ըսեր և թուրքերէն քարոզով մը մխիթարեր է ժողովուրդը, շեշտելով Հայոց և Ցունաց համերաշխութեան օգտակարութիւնը. Ապա դարձեալ յոյն եկեղեցականաց առաջնորդութեամբ եկեղեցւոյն յատուկ մասը իր ձեռքով բաշխեր է ժողովրդեան, որոնք մի առ մի դիմելով և Ն. Սրբազնութեան Աջը համբուրելով ստացեր են.

— Ազգ. Պատրիարքարանի կողմէ ինչ ինչ շնորհներ և արտօնութիւններ խնդրուած ըլլալով անոնց նկատմամբ այս անգամ Կայսերական իրատէ ելած է. և իրատէին պարունակութիւնն արտաքին գործոց նախարարութեան միւսթէշար բարձր. Ցարութիւն փաշայի կողմէ հաղորդուած է Ամեն. Ս. Պատրիարքին. Կայսերական Իրատէն արդէն հաղորդուած է պատկանեալ պաշտօնարաններուն:

— Մշոյ նորընտիր առաջն. տեղապահ Տ. Բարգէն ծ. Վ. հասաւ Մուշ և մեծ սիրով և ուրախութեամբ ընդունուեցաւ ս. Կարապետի միաբաններէն.

— Կրօնական Ժողովը լսելով որ Քէսապի ազգայիններէն ոմանք ի հռովմէականութիւն կը դիմեն, որոշեց այս մասին տեղեկութիւն ուզել Անտիոքի տեսուչ Տ. Թադէոս քհ..էն.

— Ամեն. Ս. Պատրիարքը՝ որուն անձնական տկարութիւնը բաւական կազդուրուած է, Կայսերական պալատ երթալով շնորհակալութիւն յայտնեց Կայսերական վերջին իրատէներուն համար.

Ն. Ամենապատուութիւն յաջորդ օրը այցելեց նաև Բարձր. Մեծ. Եպսրքոսին և Պատրիարքարանին, որմէ յետոյ սկսաւ երթալ պատրիարքարան՝ ըստ սովորութեան։

— Տոքթ. Լէման գերմանացի ուսուցչապետը՝ որ Վանի և ուրիշ նահանգներու մէջ գիտնական խուզարկութիւններ կատարած է, Կովկասի Ճամբով Պոլիս եկած ըլլալով՝ այցելութիւն տուաւ Ս. Պատրիարք հօր իր բնակարանին մէջ։



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՈՒՂԵՂԻ ՅՈԴՆՈՒԹԵԱՆ ԽՐԱՏԻՒԸԿԸ

Սեպտեմբերի 1-ի համարով «Բիւզանդիոն» գովելի եռանդեամբ յիշեցնում է, թէ սկսում է դպրոցական նոր տարին և թէ պէտք է զգուշանալ հին վտանգներից, որոնց մէջ առաջինն է ուղեղի յոգնութիւնը։ Ցգիտութեան զոհեր պիտի պակասին, էլ անիրաւութիւններ չպէտք է գործուին և տառապած սրտերը դառնանան, եթէ դասախօսները գիտենայ որոշել, թէ ինչից է առաջանում աշակերտներից մէկի գրգռութիւնը, միւսի ծուլութիւնը, երրորդի ստախօսութիւնը, չորրորդի անհնազանդութիւնը և այլն։ Եւ ո՞րքան պատիժներ իրանց վնասակար ձեր պիտի փոխեն։ Դաս չգիտենալու համար տրուելիք պատիժներ, քննութեանց մէջ ձախողներ՝ ո՞րքան պիտի նուազին, եթէ ժամանակացոյցը յարմար կերպով պատրաստուի, եթէ քննիչն ի նկատի առնէ քննուողի ուղեղի յոգնութեան ստատիճանը։

Յոդուածագրին այսպէս համակրելի կերպով խրատում է իւր պաշտօնակիցներին, հրաւիրելով՝ որ իրանց կազմական կանոնագրի տրամադրութեանց համեմատ վարուին։

Մենք, ռուսահայերս, ի հարկէ տաճկահայերի հանգամանքների ծանօթութիւն չունինք, բայց այս տեղն ուսուցիչը ոչ մի հնար չունի աշակերտի յոգնութեան ստատիճանը չափելու, և ոչ մի կանոնագիր նորան չի կարողանայ խելքի բերել, եթէ դասախօսական հոգի չունի։ Կարելի է, թէ հնարաւոր է խրատներով տաճկահայերի գէթ զգացմունքը շարժել, իսկ մենք, ռուսահայերս, կոպիտ ժողովուրդ ենք, մեր սրտի լարերը դիւրաւ չեն լարվում, մեր «պինդ գլուխները հեշտ կերպով չեն կակղանում»։

Ուղեղի յոգնութեան խնդիրը մերոնց էլ անծանօթ բան չէ. և ո՞ր նորաձևութեան խնդիր անտեսած է մնում մեզ։ Բայց այս դէպքումն էլ շփոթում ենք իրերը և մի ստուգիմ նշանակում ենք այլևայլ բաներ։ Յոր օր. յոգուածագիրն ուղեղի յոգնութեան փորձերի եղրակացութիւնները յիշատակելով, ի թիւս այլոց ասում է, թէ աշակերտի շաբաթական աշխատութեան ամենալաւ օրերն են կիրակնօրեայ հանգստութիւնից յետոյ առաջին երկու օրերը, ինչպէս որ օրուայ մէջ աշխատութեան լաւագոյն ժամերն են՝ դասերի առաջին երկու ժամը։ Մինչդեռ եթէ մեր դպրոցների աշակերտական մատեանները քննենք, կը հանդիպենք այն զարմանալի իրողութեան, թէ մեր աշակերտները աւելի ծուլանում և աւելի անբաւարար թուանշաններ են ստանում—հէնց հանգստութեան հետևեալ օրը, այսինքն երկուշաբթի օրը։ Մինչդեռ ուղեղը աւելի յոգնած է երկուշաբթի օրը, քան ուրիշ օրերը։

Մեզ մխիթարելու համար կարող ենք աւելացնել, որ ուղեղի յոգնութեան խնդիրն իւր յատուկ պատմութիւնն ունի, և թէ չփոթութեանց դուռը թերևս ուրիշ տեղ պէտք է փնտռուի։ Ուղեղի յոգնութեան խնդիրը բուն գերմանական ծնունդով է առաջ եկել, որ մոտաւորապէս 10 տարի առաջ աւելի ընդարձակութիւն ստացաւ և ամէն երկիրներում խօսակցութեան ու քննութեան նիւթ դարձաւ։ Երբ որ գերմանական կայսրն էլ իւր յատուկ եռանդով յուզումն աւելի ստատկացրեց։ Աղոեսք աղի ուսումնարանը իւր աշակերտներին լատիից աւելի աշխատեցնում է։—ահա խնդիրն այս է։ Բայց շատ սխալ կը լինի կարծել, իբր թէ ծանրաբեռնութեան խնդիրը վերջին տասնեակ տարուայ խնդիր է։ Կարելի է ասել, թէ 1836 թուին «Բերլինի բժշկական ամսագիրը» օրագրի մէջ հանդէս հանեց այդ խնդիրը՝ «Դպրոցներում առողջութեան պաշտպանութիւնը» յոդուածով, որ մեծ ազդուկ հանեց։ Իսկոյն ամէն կողմից ընդդիմախօսներ դուրս եկան, ամէնքն սկսեցին վիճաբանել։ Մոռացուեցան ուրիշ հիգիենական խնդիրները, մինչև որ լուսաւորութեան նախարարը հրաման ստացաւ արտունչները լաւ քննել։ Հետևանքն այն եղաւ, որ գանգատներն ընդհանրապէս անհիմն համարուեցան, և միայն փոքր անպատեհութիւնները վերացնելու համար՝ առաջարկուեցան մի քանի խորհուրդներ։ Մի առ ժամանակ հասարակական կարծիքը խաղաղուեցաւ։ 1854-ին, 1860-ին, 1884-ին պայքարը հետզհետէ աւելի ստատկացաւ, ամսագիրը-